

1911 № 2126

№ 1 Համ. «Հասկերմն» տարանի № 1

ՄԱՐՍԻԼ ՊՐԻՎՈ



ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ԳՆԱԼԸ

Գինը 3 կոպ.

Թարգմ. Հ. Տ.—Ա-ի



ԹԻՖԼԻՍ

Տարան «Հասկերմն» ելիգաւեւ. № 17.

1911.

84

7-92

20 APR 2006

№ 1 Հրաձգ. «Հասկերանգ» սպարանի № 1

18.9 NOV 2010

84

7-92

ՄԱՐՍԷԼ ՊՐԵՂՕ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

ԳՆԱԼԸ

Թարգմ. Հ. Տ.—Ա.—Ի



ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հասկերանգ» Երևան. № 17.
1911.

2013 թ. 03. 28

7013

ԳԵՐԵՋՄԱՆԱՏՈՒՆ ԳՆԱԼԸ

Եվրի պրեֆեկտուրայի խորհրդի անդամ պ. Մորիս Դատրիկուրը, լինելով բոլորովին ճշտապահ պաշտօնեայ, կանոնաւոր կերպով էլ նուիրւում էր զուարճութիւններին:

Ամեն շաբաթ օրը ժամը մէկի կառաւարդով Փարիզ էր ուղևորւում, տեղն էր հասնում ժամը երկուսին և իր ուղեպայուսակը ձեռքին Ամստերդամեան փողոցով հարիւր մետրի չափ գնալուց յետոյ ներս էր մտնում № 58 Bis տունը և անկարպետ մաքուր սանդուխներով երկրորդ յարկն էր բարձրանում: Մի կողմ միայն բացուող դրան վրայ եղած ցուցանակը յայտարարում էր, որ այստեղ ապրում է «M-lle Գրաֆ, կար անողը» Դատրիկուրը քաշում էր զանգը. դուռը բաց էր անում գլուխը զգգողւած, նիհար բայց կօկէտ ուրեէ աղջիկ-աշակերտուհի, և մինչև նա իր վերարկուն կը կախէր և ուղեպայուսակն



59076-66

էլ որեւէ անկիւնում կը դնէր, աղջիկը ներս էր վազում արհեստանոցը և աղաղակում.

— Օրիորդ, պարոնն է:

Նրանք բարեկամացան մի շաբաթ երեկոյ, երբ նրանք իրար տեսան պատահմամբ մի ինչ որ զբօսաթատրոնում: Մարթա Գրաֆը տասնեակնգամեայ աղջկայ հետ նստած էր Դոտրիկուրի կողքին: Պայծառ լուսաւորութեան տակ իր փայլատափուկ գունատ դէմքով և կպրի պէս արհեստական կերպով թխացրած սև մազերով շատ գեղեցիկ էր երևում: Խորհրդականն աշխատում էր փոքրիկ ծառայութիւններ մատուցանել, տալիս էր իր դիտակը, դերասանուհիների անուններն էր սովորեցնում և վերջն էլ առաջարկեց ներկայացումից յետոյ շօքօլադ խմել: Եւ այսպիսով նրանք ծանօթացան Յիմմէրի մօտ: Դոտրիկուրը յայտնեց նրան թէ ինքն ուլ է, ինչպէս է իր ազգանունը, իմացաւ նաև թէ ուլ է նա, որ նա բնակւում է Փարիզում միայնակ, որ նրա մայրը մեռած է և թէ ծերունի հայրը ապրում է Կուրէ-

րում՝ ինչ որ փորձնական ագարակում (Ֆերմա), որը կառավարում է իր քոյրը, իսկ կրտսեր քոյրը դեռ ևս բնակւում է Բրի-Կանտ-Ռօբերի մենաստանում, տարէնը երեքից-չորս անգամ Փարիզ է գալիս: Որպէսզի նրան բաւականութիւն պատճառած լինի, Մարթան եկել էր թատրոն:

Խորհրդականը երկու քոյրերին էլ ճանապարհ գցեց մինչև Ամստերդամեան փողոցը: Նա առաջարկեց իր թեք Մարթային և բազմաշանակաբար սեղմում էր: Երբ նրանք մօտեցան նրանց տանը, նա աւելի ևս ուժգին սկսեց սեղմել, բայց m-lle Գրաֆը ականարկեց աչքերով աղջկայ վրայ:

— Այսօր չի կարելի, — շշկաց նա, — եկէք ինձ մօտ շաբաթ օրը:

Նա 'ի հարկէ եկաւ: Եւ ահա այսպէս շարունակուեց երեք տարի, շաբաթական մի այցով: Նա ամեն շաբաթ օր գալիս էր և երկուշաբթի օրը վերադառնում էր, բացի այն մի քանի շաբաթներից, երբ Մարթայի մօտ հիւր էր գալիս կրտսեր

քոյրը: Այդ կերակի օրերը Դօտրիկուրը անց էր կացնում էվրում, թէպէտ և ձանձրանում էր այդ բանից: Բայց յետոյ աւելի խիստ կերպով բաւականութիւն էր զգում շնորհիւ իր կապի: Առհասարակ, կարծես թէ Մարթան ու նա մէկ մէկու համար ստեղծուած լինէին. երկուսն էլ կարգ ու կանոնի և արտաքին կօրէկոտութեան սիրահարներ էին, խնայող էին:

Խորհրդականն իր տարփածուին քիչ միջ զբաւ էլ էր տալիս, ճիշտ է շատ քիչ, բայց նա հարուստ չէր և տալիս էր որքան կարող էր, որովհետեւ նա ժլատ էլ չէր: Մարթան ընդունում էր այն: Կարանելու արհեստը աւելի շատ վաստակ էր տալիս, քան պաշտօնեայի պաշտօնը, բայց նա ֆրանսուէիների մեծամասնութեանը յատուկ կանոնով ենթադրում էր, որ կնոջ կողմից եղած փաղաքշանքները թէկուզ հէնց ձևի համար, պէտք է գնահատուին դրամապէս:

Այս բանը երբէք նրան խոչնդոտ չէր հանդիսանում սիրել և հաւատարիմ լինել Դօտրիկուրին: Նա Դօտրիկուրին ընդու-

նել էր իբրեւ զարգացած, կրթուած, վայելչակազմ և իր երեսունհինգ տարիքին համեմատ լաւ պահուած մի մարդ:

Յունիսեան շաբաթ օրերից մէկին առաւօտուայ տասնեմէկ ժամին Դօտրիկուրը վերադառնալով վերաստուգութիւնից, որ երեք օր էր տեւել, ստացաւ սև շրջանակով մի նամակ, որի վրայ Փարիզի նամակատան կնիքն էր խփուած: Նա բացեց ծրարը: Նամակում գրուած էր.

«Պ. Դօտրիկուր.»

«Խորին թախիծով յայտնում եմ ձեզ, որ իմ քոյր m-lle Դրաֆը, որին դուք այցելում էիք, յանկարծամահ եղաւ երէկ՝ չորեքշաբթի օրը շրջեռակի ընդլայնումից: Ես իմ մեծ քրոջս հետ Փարիզում եմ գտնուում: Թաղումը տեղի կունենայ վաղը: Դուք երևի կցանկանաք ներկայ գտնուել: Քոյրս թաղումից անմիջապէս յետոյ կվերադառնայ Կուբեր, որովհետեւ պարտաւորուած է լինել ազարակում, իսկ ես միառժամանակ կը մնամ այստեղ մինչև գործերը կարգի դնեմ: Յուդարկաւորութիւնը լինելու է առաւօտեան 10 ժամին:

Խնդրում եմ ընդունել յարգանացս հաստիքը՝ Մարի».

Յ. Գ.—Այն ժամանակ, երբ դուք ծանօթացաք Մարթայի հետ թատրոնում, նրա հետ ես էի:

Երբ խորհրդականը կարգաց նամակը՝ գունատուեց: Երբէք չես կարող քեզ երկար պատկանող կնոջ մահուան լուրը լսել անտարբեր կերպով... Դատրիկուրը զգաց, որ նրա կողերի վրայով կարծես մըջունները սողացին և նրա աչքերը, որ վաղուց մոռացել էին լացը, կարծես ուզում էին արտասուել:

«Խեղճ աղջիկ»—շնչաց նա և նստեց ու իր սիրելի էակին խլող մահուան դէմ եղած դայրոյթը միացրեց իր սրանեղութեան հետ, որովհետեւ կազմակերպուած կեանքը քայքայուեց, որ այսուհետեւ այլևս ոչնչով չի կարող սփոփել իր կիրակնօրեայ ճանձրոյթը: Խեղճ Մարթա, ամեն ինչ վերջացաւ, նա նրան այլևս չի տեսնիլ: Խորհրդականը մտածեց թէ թաղման օրը իր բացակայութիւնը երևի շատ տափօրինակ կը թուար թէ գրկեցնելին և թէ քոյրերին:

Այն եղրակացութիւնը, որ այնտեղ հաւանակարար կանէին՝ վիրաւորում էր նրա բարի սիրտն ու նրա անբասիր զգացմունքը:

Որքան ափսոս, որ նամակները չուղարկեցին նրան: Փոռէ նա մի անգամ ևս կըտեսնէր իր սիրոյ առարկայի կոկիկ բնակարանը, ննջարանը, արհեստանոցը, ընդունարանը, որտեղ կանգուն փայտեայ հանդերձաձողերի վրայ կախտած էին կանանց զլխարկները: Յանկարծ նա յիշեց, որ Մարթայի մօտ իր գիշերուայ իւրեղէնները են մնացել, ինչպէս նաև ածիւլելու գործիքները, իր պատկերը, նամակները:

«Պէտք է գնալ»—վճռեց նա:

Քառորդ ժամից յետոյ ուղևորուելու էր այն կառախումբը, որով առհասարակ նա գնում էր: Ձեռաց պատրաստուեց նա և գնաց կայարան:

Սովորական ժամին նա զանգահարեց իր պաշտելու դրան զանգը:

Նա խսկոյն ճանաչեց որ իրեն դուռը բաց անող ջահէլ, սևեր հագած, գեղեց-

կակաղմ թարմադէմ շիկահեր աղջիկը Մարթայի փոքր քոյրն էր:

— Դ. Դոտրիկուր... —, ասաց նա և ամբողջովին կարմրելով շուռ եկաւ. — համեցէք ընդունարանը:

Օրիորդը նրա ետեւից ներս մտաւ սենեակ և նստեց նրա հանգէպ: Խորհրդականն սկսեց բացատրել, որ վերաքննութեան գործերով բացակայ լինելով անկարող եղաւ ներկայ գտնուել թաղումին:

Արհեստանոցին կից ու միշտ կենդանութիւն վայելող սենեակի այս անգամուայ խորհրդաւոր լրութիւնը և ջահէլ օրիորդի ներկայութիւնը նրան վախեցնում էին: Եւ նրա երկչոտութիւնը, ինչպէս էվերի խորհրդարանում, ստիպում էր միայն չոր ու ցամաք ու պաշտօնական ֆրաղներ արտայայտել:

Մարի Գրաֆը հանեց գրպանից թաշկինակը և սկսեց լուռ կերպով հեկեկալ: Դոտրիկուրը միանգամայն իրեն կորցրեց: Նա քար կտրեց և մի հայեացքով աչքածեց սենեակը: Հանդեձաձողերը կախուած զլխարկներով կանգնած էին իրենց տե-

ղերում: Թիկնաթոռի վրայ դրուած էր մի մեծ պսակ սև և սպիտակ յուլունքներից, որի կենդրոնում գտնուում էր մի ապակի հետեւալ վերտառութեամբ «Ընդունիր մեր ցաւակցանքները»:

Ջահել աղջիկը դադարեց լալ:

— Դուք պսակի՞ն էք նայում... Այդ գնեցի ես երեկ երեկոյեան: Գեղեցիկ է, այնպէս չէ... Քսան և երկու ֆրանք:

— Արժէ, շատ գեղեցիկ պսակ է:

Մարին սրբեց աչքերն և քիթը: Այժմ նա էլ նայում էր պսակին և նրա աչքերը վառւում էին բաւականութեամբ:

— Օրիորդ, չէ՞ք թոյլ տալ ինձ —, խօսեց խորհրդականը, — սոյն պսակը նուիրել... (նա վախեցաւ)... յիշատակին... մէկ խօսքով վճարել դրա արժէքը...

Մարին մտածեց և յետոյ պատասխանեց:

— Ո՛չ ես ևս ուզում եմ մասնակցել, բայց եթէ կամենում էք, կիսովին գնենք:

Նրանք համաձայնուեցան. այս առևտրական յաջողութիւնը նրանց մօտեցրեց և նրանք սկսեցին աւելի մտերմաբար խօ-

սել: Մարին պատմեց վերջին օրերի դէպքերը, թէ ինչպէս ագարակում ստացուեց ստիպողական հեռագիր, որով կանչուած էին, որովհետեւ Մարթան շատ ծանր հիւանդ էր, թէ ինչպէս նա իր մեծ քրոջ հետ գիշերով ճանապարհ եկաւ և արդէն Մարթային մեռած գտաւ, իսկ նրա մօտ՝ երէցին և մեռելապահին:

— Յետոյ էլ թաղումը, իսկ վերջն էլ այսքան անդուրեկան գլխացաւանք... աւելացրեց աղջիկը իր նենգամիտ ձայնով:— Մեծ քոյրը ստիպուած էր անմիջապէս վերադառնալ և ես եմ ստիպուած գործ ունենալ նօտարի հետ ժառանգութեան համար: Հարկէ նաև որոշել թէ ինչ անել արհեստանոցի հետ: Գլխաւոր արհեստաւորունին ուզում է գնել արհեստանոցը, բայց կոպէկներ է առաջարկում: Մտածում եմ, արդեօք լաւ չի լինիլ, որ ինքս կանգնեմ գործի գլուխը: Ես լաւ դերձակուհի եմ և վանական արհեստանոցում կառավարչուհի էի և շուտով կրնտեւեանայի գլխարկներ շինելու գործին: Միայն ինձ այն բանն է սարսափեցնում, որ

մեն մենակ կը մնամ Փարիզում...

Դօտրիկուրը ականջ էր դնում նրան և գտնում էր, որ նա համակրադէմ է և հետաքրքիր աղջիկ: Երբ օրիորդն ասաց «Ժառանգութեան պատճառով», նա մտածեց, որ իր տուած փողերն էլ այդ ժառանգութեան մէջ են դրուում որպէս Մարթայի խնայողութիւն և կը վիճակուեն այս աշխոյժ ու ժիր գեղջկուհուն. այս բանը նրան հաճոյք պատճառեց: Նա մտքում ծրագիրներ էր կազմում, որնէ կերպ հարցնել իր գիշերաշապիկներին, ածիլուելու գործիքների և պատկերի մասին, բայց ի հարկէ նրան թւում էր, որ անքաղաքավարութիւն կրլինի ջահէլ աղջկան յայտնել իր մտերմական յարաբերութեան մանրամասները և նա վճռեց գրել մեծ քրոջը: Եւ նա ոտքի ելաւ մնաս բարեւ ասելու:

Մարին զարմացաւ:

— Ինչպէս, դուք ճանապարհուում էք: Միթէ դուք չէք կամենում գնալ ինձ հետ...

— Ձեզ հետ... ուր:

— Ի հարկէ գերեզմանատուն... պսակը տանելու համար: Հեռու չէ, Ամստերդամեան փողոցի վերջում... Մօմարտերեան գերեզմանատունը...

— Ի հարկէ, օրիորդ —, պատասխանեց խորհրդականը, մեծ հաճոյքով. մենք կառք կը վարձենք:

— Շատ բարի, նա կը տանէ պսակը, իսկ մենք ոտով կը գնանք հտեից: Ես գնամ գլխարկս ծածկեմ:

Նա միայնակ մնաց սենեակում: Կիսաբաց դռնով գողունի կերպով ներս սողացին տխուր յիշատակները և երիտասարդ մարդուն յիշեցրին իր պաշտած կնոջ շարժումները, մարմնի դրուժեան ձևերը, նրա փաղաքշանքները, որի վրկաներն էին այս կահկարասին, որոնք ընդգծում էին Սիրոյ և Մահուան մէջ եղած սարսափելի հակադրութիւնը: Եւ երբ վերադարձաւ Մարին, որ իր սգազգեստում սև գլխարկով ու անգլիական կրէպից շինած շղարշով անչափ գեղեցիկ էր, խորհրդականը սրտի թեթևութեամբ շունչ քաշեց...

Արդէն մօտաւորապէս ժամը երեքն էր, երբ կառքը հասցրեց նրանց Մոնմարտրեան գերեզմանատան պատնէշին. Դօտրիկուրը պսակն անցկացրեց աջ թևի վրայ, իսկ ձախն առաջարկեց Մարին և նրանք գերեզմանատուն մտան, հանդարտ և լուռ անցան դեռ նոր ջրած ուղիով, որ արևի ճառագայթներով էր լուսաշաղկուկ,

որից փայլում էին նաև տոսախի տերևներն ու միանման դամբարանների քարերը:

Երկուսն էլ շոքել էին և յոգնել:

— Գիտէ՞ք ճանապարհը —, հարցրեց խորհրդականը, որպէս զի մի բան հարցած լինի:

— Օ, այո՛ —, պատասխանեց աղջիկը. — Ես շատ լաւ յիշում եմ:

Նրանք մեծ ծառուղիից թեքուեցին դէպի փոքրիկ շաւիղը, որ դէպի աջ կողմն էր ծուռում: Այստեղ գերեզմաններն աւելի համեատ էին, մէկը միւսին հպուած, բայց այստեղ, գերեզմանատան այս անկիւնում աւելի շատ ծառեր կային: Կարծես թէ չքաւորներն ուզում էին այնպէս քաւել իրենց մեղքերը, ինչպէս որ ապրել էին — ստուէրում: Ծառերի վրայ ճըռում էին և իրար հետ կուռում ճնճողւկները:

— Ահա, խօսեց Մարին, կանգ առնելով դատարկ վայրի մօտ. Մարին անցաւ տոսախի սաղարթով, Դօտրիկուրը նրա ետևից և նրանք մօտեցան գորշ փայտից շինած փոքրիկ խաչին, որը դեռ ևս նոր էր և այնպէս էր փայլում, կարծես դեռ ևս ներկը ցամաքած չը լինէր, խորհրդականը կարգաց սպիտակ տառերով գրած «Մարթա Գրաֆ» և ծննդեան ու մահ-

ւան թուերը:

Աղջիկը տիրոջ հայեացք գցեց գերեզմանին, թաշկինակը փռեց և հոգեց. Դոտրիկուրը կանգնած մնաց, բայց գլխարկը հանեց և մտադրադ գիրքը ընդունեց:

Նա ոչ մի բանի մասին չէր մտածում. մանգալուց, շոգից և այս առաւօտուայ բոլոր անսպասելի պատահարներից նա յոգնել էր և կիսամոռաց դրութեան մէջ էր: Յանկարծ նա իր կողքին լսեց թոյլ հեկեկանքի ձայնը: Այս հեկեկանքը, ինչպէս մի բոթոց, կարծես արթնացրեց նրան, շուտ տունեց սրտում հաւաքուած յուզումները: Հողը, խաչը, գերեզմանների զարդարանքները, կիպարիսներն ու տոսախենիները միանգամից նրա շուրջը մթնեցան, կարծես այն տեսարանը բացուեց, երբ ամպերը գալիս ծածկում են արևի լոյսը: Նեարդներին թախծալից ալեկոծումը տիրեց և այս տխրութեան մէջ խիստ կերպով հպուած էին իրար դէպի հեկեկացող քոյրը եղած խղճանքը դէպի հանգուցեալի քոյրը եղած ափսոսանքը:

Խեղճ Մարթա. նա նորից տեսնում էր նրան գունատ, յոգնած, մոռաւանդ կեանքի վերջին շարաթիւր: Ձէ որ նա միակ էակն էր, որ մօրը մահից յետոյ ամբողջ տաճը տարի փաղաքշում էր նրան:

Նրա պաշտօնէական կեանքը, որ զրկուել էր կիրականօրեայ տեսակցութեան յոյսից, յանկարծ պատկերացաւ նրա առաջ իր ամբողջ տգեղութեամբ, որ բաժանուած էր երկու կէսի՝ ձանձրալի գործ և ձանձրալի զուարճութիւններ կաֆէում: Իրեն մասին հանած այս եզրակացութիւնը աւելի ևս ոյժ տուեց նրա վշտին և նա զգաց, որ աչքերի մէջ արցունքներ երեւացին:

Այդ բոպէին Մարին ոտքի ելաւ և նկատեց, որ նա լալիս է: Նրանց սրտերի այեկոծումները փոխադարձաբար թափանցում էին մէկից միւսին, ինչպէս երկու իրար հանդէպ դրուած հայելիների մէջ երեւցող առարկան և նրանք այնպիսի շարժում գործեցին, ինչպէս բնազդաբար տեղի է ունենում այն ազգականների մէջ, որոնց աչքի առաջ դեռ նոր ծածկեցին թանկազին դիակի դադաղի խուփը. նրանք գրկեցին միմեանց: Խորհրդականը համբուրեց աղջկան թշից վեր, որ արցունքից ազի էր դառել: Աղջիկը հանդարտութեամբ ազատուեց նրա գրկից:

— Գնանք —, հարցրեց նա փոքր ինչ յուզուած ու կարմրած:

Դոտրիկուրը դրական դիրք ընդունեց և նրանք գնացին գերեզմանից այն



ճամբով, որով դեռ նոր էին եկել: Մարին լուռ, աչքերը խոնարհած առաջ էր գնում: Սիրտն անկանոն կերպով էր բաբախում. կրկնուող վշտի հարուածները հեկեկանք առաջացրին: Ինչպէս առհասարակ զգայուն սիրտ ունեցող տղամարդը տեսնելով լացող գեղեցիկ կնոջ ցանկութիւն է գգում զրկել նրան, նոյնը ցանկացաւ և խորհրդականը՝ զրկել, սփոփել, մխիթարել նրան փաղաքշական խօսքերով:

Գերեզմանատան պատնէշի մօտ կարծես Մարին ուշքի եկաւ:

— Պարոն, ես ձեզ ազատում եմ—, աւաց նա,— ես պիտի գնամ նօտարի մօտ. երեւի դուք էլ գործեր կունենաք... Դօտրիկուրը ոչ մի գործ չունէր, բայց զգացմունքների անսովոր հարուածները առաւօտից խոնջացրին նրան:

— Այո... փնթփնթաց նա,— ես պէտք է գնամ մինիստրութիւնը:

Օրիորդը նայեց նրա աչքերին, իոկ նա շատ ափսոսաց, որ բաժանուում է նրանից. նա ուզում էր նորից տեսնել նրան:

— Դուք էլ դուք բարի կը լինէք և կը համաձայնուէք ճաշել ինձ հետ այս երեկոյեան—, հարցրեց նա:

Օրիորդի դէմքը մի բոպէ մտազբաղ

ու գուարթ կերպարանք ընդունեց:

— Ինչո՞ւ չէ, լաւ—, պատասխանեց նա: Ես բոլորովին միայնակ եմ: Որտե՞ղ կը ճաշենք մենք: Կամենում էք ճաշարանում՝ Մօբէժ փողոցի վրայ:

— Դուք ճանաչո՞ւմ էք այդ տեղը:

— Ի հարկէ, երբ ես Փարիզ էի գալիս, միշտ Մարթայի հետ այնտեղ էինք ճաշում:

— Շատ լաւ. ուրեմն վճռուած է... Ո՞ր ժամին:

— Եօթին... Եթէ ձեզ յարմար է, մենք կը պատահենք միմեանց ձիաքարշի կայարանում Notre Dame de-Iorette

Նրանք սեղմեցին մէկ մէկու ձեռքերը: Դօտրիկուրը դեռ ևս կանգնած էր միևնոյն տեղի վրայ և նայում էր օրիորդի հեռացող ստուէրի ետեկից: Օրիորդը անկիւնի մօտ շուռ տուեց քայլերը և տեսողութիւնից անյայտացաւ: Այն ժամանակ նա գնաց զիմացի փողոցի մայթերով դէպի Աստղի կամարը, իսկ յետոյ իջաւ դէպի Ելիսեան դաշտերը: Նրա մօտով անց էին կենում կանայք, տիկնայք, որոնց հետևում էին զանդաղ կերպով նրանց կառքերը, աղախինները, աշխատաւորուհիները, և ծախու գեղեցկուհիները: Մի միտք միայն համակել էր նրան. «Ես ար-

դէն այնքան ջանել չեմ, որ նոր կապեր հաստատեմ: Եւ նա ինքն էր իրեն հակասում. «Բոլորովին ոչ... Եւ ինչո՞ւ ոչ, եթէ նա մնում է Փարիզում... Նա ըստ երևոյթին բոլորովին համեստութիւն չէր անում: Վերջապէս այս մտքերն այնքան գրգռեցին նրան, որ նա պատրաստ էր յարձակուել առաջին պատահողի վրայ և թակել: Նա մտաւ կաֆէ, վերցրեց լրագիրը և սկսեց ծայրէ 'ի ծայր կարդալ մինչև յայտարարութիւնները, կարծես թէ ինչ որ պարտաւորեցուցիչ գործ կատարելիս լինէր, և այնքան նստեց, մինչև որ կայարանը գնալու ժամանակն հասաւ:

Մարին եկաւ ժամադրովայրը որոշեալ ժամին: Արդէն եօթն էր խփում. նա արդէն քսան ըոպէ կը լինէր, որ սպասում էր: Նրանք հանդիպեցին ժպիտներով և երկուսն էլ զգացին, որ շատ հաճելի էր երկրորդ անգամ պատահելը: Նրանք արագութեամբ գնացին ճաշարան և նստեցին այն սեղանի մօտ, որտեղ Դօտրիկուրը միշտ ճաշում էր Մարթայի հետ: Ծաղը, ի հարկէ, շատ ուրախ անցաւ:

Կարծես թէ ինչ որ լուռ համաձայնութեամբ նրանք չէին ուզում խօսել Մարթայի մասին: Մարին պատմում էր իր մանկութեան, ազարակի, մենաստանի, արհեստանոցի մասին: Նա կենդանութիւն էր ստացել և զուարթ տրամադրութեան տակ էր: Հարեան սեղանի մօտ նստած տղամարդիկը սքանչացող ու նախանձալից հայեացքներով էին նայում նրան և Դօտրիկուրին այս բանը դուր էր գալիս: Այնուհետև նրանք սկսեցին խօսել ապագայի մասին՝ մնալ Փարիզում թէ՞ ծախել գործը:

Դօտրիկուրը հաւատացնում էր, որ հարկաւոր է մնալ, իսկ նա ասում էր, որ ինքն անփորձ է և վախենում է մենակութիւնից:

— Բայց ես միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու, ընդդիմախօսում էր խորհրդականը: Նա բռնեց նրա ձեռքն ու սկսեց քնքշաբար սղմել: Եւ բարձրաձայն ասած խօսքերի մէջ նրանք հասկացան և լեզուով չարտայայտուած մտքերը:

Քաղցրաւենիք ուտելիս խորհրդականը

վճռեց խօսել իր նամակների ու ածելիի մասին: Մարթայի քոյրը յիշեց, որ մի ինչ որ տեղ տեսել էր այդ բաները: Ներանք վճռեցին, որ նա ճանապարհ կը գցէ Մարիին մինչև տունը, կը վերցնէ իր իրեղէնները և ժամը տասին ճանապարհուող կառախմբով կը ճանապարհուի էվր:

Նրանք բաւական ուշ դուրս եկան ճաշարանից և սուրճ ու սև-հաղարջից պատրաստած քաղցր խմիչքը խմելուց յետոյ Ամստերդամեան փողոցով գնացին մինչև № 58 Bis տունը: Մարին որոնեց ու գրտաւ Դոտրիկուրի իրեղէնները, լրագրի մէջ փաթաթեց և կապեց: Խորհրդականը հանեց գլխարկը և մոմը ձեռքին լոյս էր սնում. նա փոքր ինչ գողում էր:

Երբ ամեն ինչ վերջացաւ, նրանք կանգնած միմեանց երեսին նայեցին

— Վերջապէս ես պէտք է մնաս բարևասեմ—, հազիւ լսելի ձայնով խօսեց Դոտրիկուրը, և ինչպէս որ քիչ առաջ գերեզմանատան, այնպէս էլ այժմ այս բաժանումը տխրեցրեց նրան: Մարին ոչինչ չը

պատասխանեց: «Յիմարութիւն կը լինի այսպէս անելը»,— մտածեց նա ինքն իրեն:

— Բայց նախ քան իմ գնալը, թոյլ տուէ՛ք մի անգամ էլ տեսնել Մարթայի սենեակը... Վերջին անգամ—, խնդրեց նա, որպէս զի մի կերպ գոնէ առժամանակ յետաձգէ իր բաժանումը:

— Լաւ—, պատասխանեց նա և այս «լաւ»-ը հնչեց շատ յուզուած կերպով: «Եթէ ես այժմ և եթ չեմ փորձիլ—, մըտածեց Դոտրիկուրը,— կը նշանակէ վերջացաւ... Ես այլևս նրան չեմ տեսնիլ: Օրիորդը գնաց առաջ, իսկ նա նրա ետևից: Եւ երբ նրանք մտան սենեակը և օրիորդը մոմը դրեց գիշերասեղանի վրայ, նա հոգի առաւ և գրկեց աղջկան, սկսեց համբոյրներ տեղալ նրա երեսին, կրծքին, մազերին: Նա աշխատում էր դուրս պոկուել և ցածր ձայնով քչփչում էր. «Ոնեապարուեցա՛ք, ի՛նչ է:.....»

Յաջորդ օրը երեկոյեան, Մարին ճանապարհ էր գցում խորհրդականին դէպի կայարան: Նրանք նստած էին զանիւնում խօսում էին ապագայի մասին: Մարին

7013

35692

Շուտով լոյս կը տեսնեն նաև միւս հրատարակութիւնները, որոնք ընտրուած են Եւրոպական ամենալաւ գրողներից: Բացի այս «Էսպերանտո» տպարանը հրատարակելու է նաև հայ գրողների շարքը դարձեալ էժանագին գներով:

БИБЛИОТЕКА
ИМЕНИ
ВОСТОЧНОЙ СЕВЕРНОЙ
Академии Наук
СССР

Սոյն գրադարանի գրքերին լինելու է հետեւեալ զիջումը.

25 օրինակին	.	.	.	20%
50 »	.	.	.	25 »
100 »	.	.	.	30 »
200 »	.	.	.	40 »

Դիմել. Թիֆլիս, տպ. «Էսպերանտո»
կամ Тифлисъ, Типографія „Эсперанто“,
Айку Теръ-Аствадцатрянцу.

